վառելիքն էր բերում ջորիով։ Ջաղացքից ամէն շաբաթ մի պարկ ալիւր էր բերում ջրաղացպանը։ Գեղերից ամէն օր կաթ, մածուն, պանիր, եղ սեր, միրգ, ձուկ, որս էին բերում միւսլիման գիւղացիները եւ մամս սապոնով փոխում էր ու մեզ բաւականացնում։ Միւսլիման գիւղացին օճառ եփել չգիտէր, նա կարիքը հոգալու համար, հում նիւթ էր բերում բերդը փոխանակելու, որից օգտւում էին արհեստաւորները։ Շուտով միրգն ու բանջարը, սիմինդրն ու վարունդը կորցրին իրենց հմայքը. աչունն էլ հասաւ եւ չիրան տուն կրեցին, սկսեցին մալէղ եփել, պաստեղ, քոմա պատրաստել եւ մաբ չինել։

Այրն ու բենը տախտակի վերայ ինձ ճանաչացրեց Ջորեպան Ունանենց տիրացու Պօղոսը։ Մինչեւ ճաշ տախտակ էի կարդում եւ ճաշից յետոյ գնում էինք խաղալու այրերի գլխին գտնուած կիսակործան տաճարում։ Շատ հետաքրքրում էին ինձ այրերի մասին տարածուած հեքիաթները. բայց մուտքը անչափ դժուար էր։ Հետաքրքիր էր վերի բերդը, ուր գտնւում էին բագրատունիների կիսակործան ապարանքը, զօրանոցները, աւազանները. բայց շատ դժուար էր բարձրանալը, սանդուխքները փչրել-թափել էր Ահմէդ փաշան 1833 թ. որ այլեւս որ եւ է ասսի մէջը չպատսպարւի։ Սակայն 1873 թ. սանդուխներ դրինք ու բարձրացանք կերանք